

Ա-16

ՀՀ գիտությունների Ազգային Ակադեմիա
Արեւելագիտության ինստիտուտ

Էրոփուրդ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԱՐԱՅԱՄՅԱՆ

ԿՈՎՉԱՄՅԱՆ ԱՏՈՐԱՔԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ
ՎԵՐԱՄԱՆՏԻ ԿԱԶՄՈՒՄ

Է.00.02 – «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2007

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

Абрамян Эдуард Александрович

СОЗДАНИЕ И ПРИМЕНЕНИЕ
КАВКАЗСКИХ ФОРМИРОВАНИЙ В СОСТАВЕ ВЕРМАХТА

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата исторических наук
по специальности 07.00.02 – “Всемирная история”

ЕРЕВАН – 2007

Handwritten notes:
Հարգաբանությամբ
ՀՀ գիտ. ակադ. ԲԳԲ-նախն
Հ. Աբրահամյան
Հ. Աբրահամյան
06.11.08.

ՅԻ-Ն

Ատենախոսության թեման հաստատվել է Ռուսաստանի Դաշնության Պաշտպանության նախարարության Ռազմական պատմության ինստիտուտում


Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու Օ. Ա. Բելյուլուցեվ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Վ. Ն. Ղազախեցյան պատմական գիտությունների թեկնածու Յ. Ա. Կորխմազյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2007թ. դեկտեմբերի 6-ին, ժամը 13:00 ՀՀ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՅ-ի 006 մասնագիտական խորհրդի նիստում (375019, Երևան, Մարշալ Բաղրամյան 24-գ)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում: Սեղմագիրն առաքված է 2007թ. նոյեմբերի 3-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, պատմական գիտությունների դոկտոր՝  Պ. Ա. Չորանյան

Тема диссертации утверждена в Институте военной истории Министерства обороны Российской Федерации


Научный руководитель: кандидат исторических наук, О.А. Белослудцев

Официальные оппоненты: доктор исторических наук, профессор В. Н. Казахецян кандидат исторических наук, Р.С. Корхмазян

Ведущая организация: Институт истории НАН РА

Защита состоится « 6 » декабря 2007 года в 13:00 часов на заседании специализированного совета 006 ВАК при Институте востоковедения НАН РА (3750196 Ереван, пр. Маршала Баграмяна 24-г).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института востоковедения НАН РА.

Автореферат разослан « 3 » ноября 2007 г. Ученый секретарь специализированного совета, Доктор ист. наук  Պ. Ա. Չոբանյան

1. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գերմանական ծրագրերում՝ համաշխարհային հեզեմոնիայի հասնելու համար, որպես խանգարիչ գործոն դիտվում էր Խորհրդային Միությունը: Նրա ավերակների վրա նացիստները նախատեսում էին ստեղծել մի շարք ազգային-պետական կազմավորումներ, որոնք կդառնային նաև գերմանական քաղաքականության իրականացնողները Մերծավոր և Միջին Արևելքում: Ուղիղ ճանապարհը դեպի այդ տարածաշրջանները Գերմանիայի առջև բացում էր Կովկասը: Նացիստական գաղափարախոս Ա.Ռոզենբերգը այդ առիթով գրել է. «...Գերմանական քաղաքականության նպատակը Կովկասի և հարավից սահմանակից երկրներին տիրապետելն է, ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական առումով»: Ընդ որում, հատուկ դեր էր հատկացված կովկասյան ժողովուրդներին:

Հայրենական Մեծ պատերազմը ի հայտ բերեց խորհրդային ժողովրդի ոչ միայն մեծագույն հայրենասիրությունը ռազմաճակատում, քիլունքում և թշնամու կողմից օկուպացված տարածքներում, այլ նաև այնպիսի երևույթ, ինչպիսին կոլաբորացիոնիզմն է:² Կովկասում այս երևույթի ի հայտ գալը բացատրվում է շատ պատճառներով, որոնց մեջ կարևորագույն նշանակություն ուներ մի շարք եվրոպական ու ասիական պետություններում ազգայնական բնույթի կովկասյան քաղաքական վտարանդիության գոյությունը, որը կանգնել էր նացիստական Գերմանիայի հետ համագործակցության ուղու վրա նրա՝ Խորհրդային Միություն վրա հարձակվելուց շատ առաջ: Այդպիսի վտարանդիական կազմակերպություններից էին Դաշնակցություն, վրաց Մենչևիկյան, «Մուսաֆաթ» կուսակցությունների կողմից ստեղծված կազմակերպությունները, որոնք 1923-1940 թթ. որդեգրել էին ընդգծված հակախորհրդային քաղաքական դիրքորոշում՝ իրենց կարևորագույն նպատակ համարելով Կովկասի ազատագրումը բոլշևիկներից և իրենց իշխանությունների վերականգնումը կովկասյան հանրապետություններում:

Եվրոպայի վտարանդի կովկասյան համայնքներից ամենակտիվը հանդիսանում էին հայկական ու վրացականը, որոնց հետ Գերմանիան սկսեց աշխատել դեռևս 1930-ական թվականների կեսերից: Գերմանացիների հետ եվրոպահայության անվտանգության խնդիրների շրջանակներում ակտիվ համագործակցում էին Արտաշես Արեղյանը, Դրաստամատ Կանայանը, Ալֆրեդ և Ալֆոնս Մուրադյան եղբայրները: Վրացական վտարանդի քաղաքական շրջանակներից Գերմանիայի հետ ռազմաքաղաքական բնագավառում համագործակցում էին վարչապետ Նոյ ժորդանիան, վրաց բանակի գնդապետներ Շալվա Մաղալակեիժեն, Իվանե Ծուլուկիժեն և այլք: Ադրբեջանական կողմից գերմանացիների հետ համագործակցության մեջ մտավ «Մուսաֆաթ» կուսակցության պարագլուխների հիմնական մասը, որոնցից ակտիվ էին Մամեդ Եմին Ռասուլ-Չաղեն, Ա. Թոփչիբաշը, Աբդուլլա Ֆաթալի-բեյլին և այլք:

¹ Нюрнбергский процесс. Сборник материалов в 8 т. т. 3. Преступления против мира. М.: Юридическая литература, 1989. С. 455.

² Կոլաբորացիոնիստներ (ֆր. collaboration – համագործակցություն) – երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945թթ) իրենց երկրի շահերը դավաճանած և գերմանական օկուպացիոն կառավարության հետ համագործակցության ուղին բռնած անձինք, հայրենիքի դավաճաններ:

Հայրենական Մեծ պատերազմի սկսվելուն պես կովկասյան ազգերի ներկայացուցիչներին Գերմանիայի կողմը գրավելու համար որպես միջոց օգտագործվեց միջոց էր դարձել ազգային "արևելյան լեգեոնների" (Ostlegionen) ստեղծումը՝ որպես ապագա "անկախ" պետությունների բանակների կորիզ: Ա.Ֆիտլերի հատուկ հրահանգով 1941 թ. ստեղծվեցին հայկական, վրացական, կովկասա-մահմեդական (1942 թ. փետրվարից՝ ադրբեջանական) և հյուսիսկովկասյան լեգեոնները, որոնք ըստ վերոհիշյալ հրամանի ունեին "Գերմանական բանակին իրավահավասար, դաշնակից ժողովուրդներից կազմված կամավորական ստորաբաժանումների" աստիճան: Վրացական լեգեոնի շարքեր, բացի վրացիներից հավաքագրվում էին արխազներ, լազեր, ասորիներ, հույներ և այլն: Ադրբեջանական լեգեոնում, բացի ադրբեջանցիներից ծառայում էին թալիշներ, թաթեր, ցախուրներ և քրդեր: Հյուսիսկովկասյան լեգեոնն ամենաբազմազգն էր. այն միավորում էր դաղստանյան ժողովուրդներին (բացի նոգայներից), վայնախական ժողովուրդներին (չեչեններ, ինգուշներ, քիստիններ), օսերին, բալկարներին, կարաչայներին, ադղներին և այլն: Միայն հայկական լեգեոնը ուներ ազգային միատարր անձնակազմ:

Այսօր՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, անդրկովկասյան պետությունների, ինչպես նաև Մերձբալթյան երկրների և Ուկրաինայի որոշ քաղաքական գործիչներ փորձեր են ձեռնարկում արդարացնել այն անձանց, ովքեր Հայրենական Մեծ պատերազմի տարիներին համագործակցում էին նացիստների հետ, իսկ հաճախ նաև ներկայացնել նրանց որպես ազգային հերոսներ, որոնք պայքարում էին "խորհրդային տոտալիտարիզմի" դեմ: Նրանց համագործակցությունը օկուպացիոն իշխանության հետ, պատերազմական գործողություններում վերմախտի և ԷսԵՍի շարքերում ակտիվ մասնակցությունը, ինչպես նաև Կարմիր բանակի քիկունքում հետախուզական-դիվերսիոն և քայքայիչ գործունեությունը մեկնաբանվում են ինչպես ազգային անկախության ձեռք բերման համար կատարած հարկադրված քայլեր:

Սակայն վերմախտի կազմում "ազգային լեգեոնների" գործունեությունը բոլորովին էլ ազգասիրական և անշահախնդիր չէր, ինչպես, քաղաքական շահերից ելնելով, փորձում են ներկայացնել ետխորհրդային տարածքի մի շարք պետական և հասարակական գործիչների: Ուստի կասկած չի հարուցում "արևելյան լեգեոնների" առաջացման պայմանների ու պատճառների, նպատակների ու խնդիրների՝ նացիստական Գերմանիայի ղեկավարության ռազմա-քաղաքական շահերից ելնելով՝ նրանց գործածման առանձնահատկությունների հետագա, ավելի խորը ուսումնասիրության անհրաժեշտությունը: Նախկինում անհասանելի փաստաթղթերը այժմ մտնում են գիտական շրջանառության մեջ, ուստի կարելի է ավելի օբյեկտիվորեն մոտենալ Հայրենական Մեծ պատերազմի իրադարձությունների ուսումնասիրությանը և Կովկասի ժողովուրդների կոլաբորացիոնիզմին տալ անկամխակալ, քաղաքական կոնյուկտուրայից ազատ գնահատական:

2. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այսպիսով, թեմայի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է.

- ԽՍՀՄ պատմության մեջ այնպիսի կարևոր իրադարձության, ինչպիսին է Հայրենական Մեծ պատերազմը, բազմակողմանի լուսաբանման և օբյեկտիվ գնահատման կարևորությամբ:

- գերմանա-ֆաշիստական օկուպացիոն ռեժիմի գործունեության մեջ կոլաբորացիոնիզմի աղբյուրների, բնույթի, տեխնոլոգիայի և արտահայտման հետագա ուսումնասիրության կարևորությունը;
- Հայրենական Մեծ պատերազմի տարիներին վերմախտի կազմում կովկասյան միավորումների կազմավորման պայմանների և պատճառների, նրանց գործածման բնույթի, առանձնահատկությունների և արդյունքների խորը և մանրամասն ուսումնասիրության անհրաժեշտությամբ;
- Ինչպես Արևմուտքում, այնպես էլ Անդրկովկասյան երկրներում ի հայտ եկած հայտարարությունները, տպագրություններն ու "հետազոտությունները", ինչպես նաև նրանց հետևում կանգնած կոնկրետ քաղաքական ուժերի և հասարակական շրջանակների արդարացումները Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում Կովկասի լեգեոնների գործունեությունը գնահատելու անհրաժեշտությամբ:

3. ՌԻՍՈՒՄԼԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Հետազոտության առարկան Հայրենական Մեծ պատերազմի տարիներին գերմանական հրամանատարության շահերից ելնելով վերմախտի շարքերում ռազմական միավորումների կամ Կովկասի ժողովուրդների ներկայացուցիչներից կազմավորված այսպես կոչված "արևելյան" լեգեոնների ստեղծման ու գործածության պատմությունն է:

4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Հետազոտության գիտական խնդիրն է՝ ի հայտ բերել վերմախտի կազմում կովկասյան ազգային կազմավորումների ստեղծման նախադրյալներն ու պայմանները, Հայրենական Մեծ պատերազմի շրջանում Գերմանիայի շահերից ելնելով նրանց օգտագործման առանձնահատկությունները:

Առեմախտության նպատակն ուսումնասիրությանը, դասակարգման և արխիվային փաստաթղթերի վերլուծության, հուշագրությունների, պատմական և այլ գրականության հիման վրա վերմախտի կազմում կովկասյան ազգային կազմավորումների ստեղծման և գործածման յուրահատկությունների կոմպլեքս հետազոտություն կատարելն է:

Այդ նպատակին հասնելը ենթադրում է լուծել հետևյալ հետազոտական խնդիրները.

- քննել կովկասյան քաղաքական էմիգրացիայի և Կովկասի բնակչության մի մասի շրջանակներում կոլաբորացիոնիզմի արտահայտման պայմանները և պատճառները,
- ի հայտ բերել գերմանական քաղաքական նպատակները և խնդիրները Կովկասում, ինչպես նաև վերմախտի կազմում կովկասյան ազգային կազմավորումներին հատկացվող դերը,
- քննել Գերմանիայի շահերին համապատասխան կովկասյան ազգային կազմավորումների ստեղծման և օգտագործման առանձնահատկությունները,
- հետազոտել Կովկասի ժողովուրդների ներկայացուցիչներից կազմավորված միավորումների, գորամասերի և ստորաբաժանումների ռազմական գործողություններում՝ ռազմաճակատում և օկուպացված տարածքներում պարտիզանների դեմ գործածման վերաբերյալ տարբեր տեսակետները,

- քննել ԽՍՀՄ կովկասյան հանրապետությունների տարածքում դիվերսիոն-հետախուզական և քայքայիչ գործունեության վարման բնույթը ու առանձնահատկությունները:

5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Հետազոտության ժամանակագրական շրջանակները ընդհանուր առմամբ հանրընկնում են Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանին՝ 1941 թվականի հունիսի 22 մինչև 1945 թվականի մայիսի 9: Սակայն կոլաբորացիոնիստական դրսևորումների ակունքների ավելի ամբողջական քննության համար ատենախոսը ընդլայնել է դրանք և փորձել է ցույց տալ կովկասյան քաղաքական վտարանդիության և Երրորդ Ռայխի ղեկավարության հետ կապերի ձևավորման առանձնահատկությունները նախապատերազմյան շրջանում:

6. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հայրենի պատմական գիտության մեջ չկան նման թեմատիկ ուղղվածության հետազոտություններ, որոնք կշռափեին Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ վերմախտի կազմում կովկասյան ազգային կազմավորումների ստեղծման, պատրաստման և գործածման տարբեր ասպեկտները:

Նախկինում գիտական շրջանառությունից դուրս գտնվող ինֆորմացիայի մշակումը թույլ տվեց բացահայտել և ցույց տալ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին կովկասյան կոլաբորացիոնիստների գործունեության հիմքում ընկած դրդապատճառները, նրանց դերը զինված պայքարում:

Բացահայտված են Հայրենական մեծ պատերազմի տարիներին գերմանական զինված ուժերի կազմում Կովկասի ժողովուրդների ներկայացուցիչներից լեզեոնների կազմավորման արդյունքները:

Նորովի են լուսաբանվում գերմանական հրամանատարության կողմից կովկասյան լեզեոնների միջոցով ռազմաճակատում, թիկունքում պատժիչ գործողությունների անցկացման, պահպանական ֆունկցիաների կատարման և ԽՍՀՄ տարածքում դիվերսիոն-հետախուզական և քայքայիչ գործունեության, իրականացման առանձնահատկությունները:

Նորույթ է համարվում գերմանական ղեկավարության կողմից ԽՍՀՄ քաղաքացիներին հավաքագրելու գաղափարական կոնցեպցիայի ձևավորման ուսումնասիրությունը:

Հայեցակարգը ԽՍՀՄ բնակիչներին իրենց կողմը գրավելուն ուղղված տրամաբանորեն փոխկապակցված գաղափարների և գործոնների ամբողջականությունն է: Բացի այդ, հայեցակարգում արտահայտված է Գերմանիայի ներքին և արտաքին քաղաքականության փոխկապակցվածությունը, որն ուղղված էր Խորհրդային պետականության քայքայմանը:

7. ԿԻՐԱՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի գործնական նշանակությունը պայմանավորված է առաջին հերթին լուծվող խնդրի մոտությամբ, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթների և եզրակացությունների բազմությամբ, որոնք կարող են օգտագործվել հետևյալ նպատակների համար՝

- Խորհրդային Միությունում կոլաբորացիոնիզմի արտահայտման, գերմանական զինված ուժերի կազմում 1941-1945 թվականներին հակախորհրդային կազմավորումների ստեղծման և գործածման

հետազոտությունների շարունակման համար որոշակի պատմա-տեսական և մեթոդական բազայի ստեղծում,

- համաշխարհային և հայրենական պատմության, պատերազմների պատմության և զինվորական արվեստի ուսումնասիրություն զինվորական և քաղաքացիական ուսումնական հաստատությունների ունկնդիրների և ուսանողների հետ աշխատանքում,
- կոնկրետ հետազոտությունների անցկացման ժամանակ ամիրաժեշտ նյութերի, փաստաթղթերի և այլ աղբյուրների որոնման հեշտացում:

Բացի այդ, պատերազմի տարիներին կովկասյան կոլաբորացիոնիստներից ռազմական կազմավորումների ստեղծման և գործածման նախադրյալների, պայմանների և մեխանիզմների հետազոտման արդյունքները հնարավորություն են տալիս օբյեկտիվ գնահատելու դրանց գործունեությունը և ավելի խորը դատելու այն գործընթացների մասին, որոնք ներկայումս տեղի են ունենում Անդրկովկասյան հանրապետություններում: Ատենախոսության հիմնական դրույթները, ինչպես ենթադրվում է, կարող են մի շարք ստերեոտիպների դեմ պայքարի հիմք հանդիսանալ, որոնք ներկայումս Անդրկովկասյան հանրապետություններում որոշակի քարոզչական արշավների ազդեցության տակ ձևավորվում են պատմական գիտության մեջ և հասարակական կարծիքում:

8. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հեղինակը ղեկավարվել է գիտական իմացության տեսության հիմնական դրույթներով, պատմական հետազոտության անցկացման սկզբունքներով և մեթոդներով, որոնցից գլխավորներն են առաջադրվող դրույթների, գնահատականների ու եզրակացությունների օբյեկտիվությունը, բազմակողմանի լինելը, կոնկրետությունը, պատմականությունը, գիտական և ապացուցիչ լինելը: Կիրառվել են նաև այնպիսի ընդհանուր գիտական մեթոդներ, ինչպիսիք են համակարգային, վերլուծական, խնդրային և տրամաբանական մոտեցումները, վերացարկումը և ընդհանրացումը, նյութերի խնդրա-ժամանակագրական շարադրումը:

Հաշվի են առնված նաև պատերազմների տեսության ու զինված հակամարտությունների, աշխարհաքաղաքականության և ազգային անվտանգության մշակումները:

10. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Աղբյուրների ու գրականության հիմքը կազմել են ՌԴ, ԱՊՀ երկրների պետական արխիվների փաստաթղթերը, փաստաթղթերի հրատարակված ժողովածուները, այդ ժամանակի պետական և զինվորական գործիչների ելույթների, հոդվածների ու ճամակների տեքստերը, դեպքերի մասնակիցների հուշագրություններն ու հիշողությունները, վիճակագրական ու տեղեկատու նյութերը, որոնք հրապարակվել են Հայաստանում, Ռուսաստանում և այլ երկրներում:

Նախ և առաջ ուսումնասիրության, վերլուծության և համակարգման են ենթարկված ՌԴ Պետական արխիվում, ՌԴ Պաշտպանության նախարարության Կենտրոնական արխիվում ու Ռուսական սոցիալ-քաղաքական պետական արխիվում պահվող նյութերը: Թեմայի վրա աշխատանքներում մեծ օգնություն եղավ ՀԽՍՀ (Երևան) մինիստրների Խորհրդին կից ՊՊԱԿ-ի արխիվի և Ղրիմի Ինքնավար հանրապետության (Սիմֆերոպոլ) Պետական արխիվի նյութերի հետ

ծանոթությունը: Խիստ օգտակար էր ՌԴ Պաշտպանության նախարարության Ռազմական պատմության ինստիտուտի նյութերի և փաստաթղթերի ուսումնասիրությունը, որոնց մեջ հարկ է նշել 1990-ականներին հրատարակված, Ինստիտուտի աշխատակիցների կողմից պատրաստված բազմահատոր "Ռուսական արխիվ. Մեծ հայրենական" ժողովածուն: Աղբյուրների առանձին խումբ են կազմում վերնախտի հրամանատարության հրամաններն ու հրահանգները և առաջարկությունները, որոնք պահվում են արտասահմանյան արխիվներում, բայց հասանելի են դարձել փաստաթղթերի և նյութերի տարբեր ժողովածուների գերմաներեն հրատարակումից հետո: Ատենախոսության վրա աշխատելու ընթացքում հեղինակը բազմիցս հանդիպումներ է ունեցել նախկին լեգեոնականների հետ, որոնք այժմ բնակվում են ինչպես ԱՊՅ երկրներում, այնպես էլ արտերկրում: Այս ճանապարհով հավաքված նյութերը թույլ տվեցին ընդլայնել հետազոտության փաստագրական բազան և ավելի խորը հասկանալ այն շարժառիթները, որոնք դրդել էին Կովկասի խորհրդային քաղաքացիների վերնախտի հետ համագործակցության:

11. ԹԵՄԱՅԻ ՌԻՍԻՄԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՆՈՒՑ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայրենական պատմագրության մեջ Հայրենական Մեծ պատերազմի ավարտից անմիջապես հետո կոլաբորացիոնիզմի թեման լայն լուսաբանում չգտավ, ավելին՝ ըստ էության այն լռության մատնվեց: Միայն ավելի ուշ հայտնվեցին խորհրդային և արտասահմանյան ուսումնասիրողների առանձին հրապարակումներ, որոնք շոշափում էին պատերազմի ժամանակ վերնախտի կազմում կովկասյան ազգային կազմավորումների գործունեության որոշակի խնդիրները: Այստեղ նախ և առաջ հարկավոր է նշել ռուսերեն թարգմանված հոլանդացի հետազոտող Լ. դե Յոնգի¹ մենագրությունը, ինչպես նաև "արևելյան լեգեոնների" մասին հայրենական պարբերականներում տպագրվող նյութերը:² Ուշադրության են արժանի Ա. Յակոբսենի և Ռ.Ռյուրուպի խմբագրությանը հրապարակված փաստաթղթերի ու նյութերի հավաքածուները:³ Այդ հրապարակումներում ներկայացված են Հիտլերի շտաբում օպերատիվ խորհրդակցությունների նյութերը, ինչպես նաև խորհրդային քաղաքացիներից բաղկացած ազգային զինված կազմավորումների ստեղծման վերաբերյալ հրամաններ, ղեկավար հրահանգներ և հրամաններ:

Ընդհուպ 1990-ականների սկիզբը Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ կոլաբորացիոնիզմի խնդիրներին վերաբերող արխիվային նյութերի փակված լինելու պատճառով արգելված էր վերնախտի կազմում կովկասյան ազգային կազմավորումների գործունեության լուսաբանումը հայրենական պատմագրության մեջ: Դրա հետ այդ ժամանակ արևմտյան պատմագրության մեջ արդեն կուտակված էին հաճախ հայրենական հեղինակներին անձանոթ մի շարք

հետազոտություններ, որտեղ դիտարկվում էին կովկասյան զինված կազմավորումների ստեղծման և օգտագործման այս կամ այն խնդիրները:¹

Թեմայի վրա աշխատելիս պատմական իրադրության ու նացիստական Գերմանիայի կողմից "արևելյան" լեգեոնների գործածման պայմանների իմաստավորման գործում զգալի օգնություն ցուցաբերեցին խորհրդային մասնագետների աշխատությունները, որոնք նվիրված են արևելյան ռազմաճակատի, հատկապես Կովկասի համար մղվող մարտերի հետ կապված, իրադարձություններին, որոնց ժամանակ գրանցվել էր ռազմական գործողություններում կովկասական կոլաբորացիոնիստների կազմավորումների առավել ակտիվ գործածում և դիվերսիոն-հետախուզական գործունեության մեջ մասնակցություն: Այստեղ անհրաժեշտ է նշել Ա.Ա.Գրեչկոյի, Խ.Ս.Իբրագիմբեյլի, Ի.Վ.Տյուլենևի և խորհրդային շրջանի շատ ուրիշ լեզվաբանների աշխատությունները:² ԽՍՀՄ փլուզումից հետո հրատարակվել են Տ.Մ.Բելիկովի, Ա.Յու.Բեզուգոլնի, Վ.Դ.Չիժնևի, Է.Բ.Սակիևի, Ն.Ն.Լեվչենկոյի, Օ.Վ.Ռոմանկոյի, Ս.Վ.Գրեբենյուկի, Դ.Վ.Շաբաևի³ և ուրիշների աշխատանքները, որոնք լուսաբանում են 1942-1943 թվականներին Կովկասում տիրող իրավիճակի վրա ազդեցություն ունեցած տարբեր խնդիրներ:

ԽՍՀՄ-ում կոլաբորացիոնիզմից վերաբերվող հարցերին ու վերնախտի կազմում խորհրդային քաղաքացիներից կազմված ազգային կազմավորումների գործունեությանը ավելի մեծ ուշադրություն էին հատկացնում արևմտյան մասնագետները: Դ.Դոֆմանի, Դ.Ֆիշերի, Դ.Յուտերմանի, Ե.Սայերի, Ջ.Նազֆիգերի, Ա.Մուցյուսի, ինչպես նաև Բ.Գլինովի և Ե.Անդրեեվայի⁴ շատ

¹ Торлакян М. Со своими днями. Лос-Анджелес, 1953. (на арм. языке); Gorlitz W. Der Zweite Weltkrieg 1939-1945. Frankfurt, 1953; Blomm T. Macedonians in War. Part II. Sidney, 1971; Thorwald J. Illusion: Soviet soldiers in the Hitler's armies. London - New York, 1975; Mader J. Hitlers Spionageregenerale sagen aus: Ein Dokumentarbericht über Aufbau, Struktur und Operationen des OKW - Geheimdienstamtes Ausland / Abwehr mit einer Chronologie seiner Einsätze von 1933 bis 1944. Berlin: Verl. der Nation, 1979. 475 S.; Zawodny J. K. Nothing but Honor: The Story of the Warsaw Uprising 1944. Stanford (Calif.): Hoover inst. press: Stanford univ. 1978. 328 p.

² Гречко А.А. Битва за Кавказ. Изд. 2-е, доп. М.: Воениздат, 1973. 496 с.; Ибрагимбейли Х.М. Крах "Эдельвейса" и Ближний Восток. М.: Наука, 1977, 319 с.; Ибрагимбейли Х.М. Битва за Кавказ. М.: Знание, 1993. 64 с.; Ибрагимбейли Х.М. Крах гитлеровского оккупационного режима на Кавказе. В кн: Народный подвиг в битве за Кавказ: Сб. статей. М.: Наука, 1981. С. 265-295; Тюленев И.В. Крах операции "Эдельвейс". 2-е изд. Орджоникидзе: Иростон, 1988. 189 с.; и др.

³ Баликов Т.М. Народы Северного Кавказа в годы Великой Отечественной войны (1941-1945). Владикавказ: Изд-во Осетинского гос. ун-та им. К.Л.Хетагурова, 2000. 184 с.; Безугольный А.Ю. Народы Кавказа в Вооруженных силах СССР в годы Великой Отечественной войны 1941-1945 гг. Штутгарт, 2005; Дзидзов В.Д., Сакиев Э.Б. Религиозный фактор в Великой Отечественной войне (по материалам Северного Кавказа) // Материалы Международной конференции, посвященной 60-летию битвы за Кавказ (1942 - 1943 гг.).

⁴ Хоффман Й. История власовской армии / Пер. с нем. У.Гессен. Париж: YMCA-press, 1990. 379 с.; Hoffmann J. Die Ostlegionen 1941 - 1943. Freiburg, 1976; Hoffmann J. Die Kaukasien 1942/43. Das deutsche Heer und die Orientvölker der Sowjetunion. Freiburg, 1991; Fisher D. The Dady Embace. L., 1988; Huterman J.N. Easten troops in Zealand, the Netherlands, 1943-1945. New York, 1997; Mayer E., Berkian A.J. Zwischen Rhein und Arax: neunhundert Jahre deutsch-armenische Beziehungen. Oldenburg: Holzberg, 1988; Munoz A.

¹ Йонг Л. Немецкая "пятая колонна" во Второй мировой войне. М.: Политиздат, 1958. 443 с.

² Советские органы государственной безопасности в годы Великой Отечественной войны // Вопросы истории. 1965. № 5. С. 20-39; Косиков И.А. Диверсанты "третьего рейха" // Новая и новейшая история. 1986. № 2. С. 220-225 и др.

³ Директивы Гитлера: Оперативные совещания у Гитлера. 1939 - 1945. Вторая мировая война в хронике и документах. 5-е изд., Берлин, 1961; Война Германии против Советского Союза 1941 - 1945 гг. Документальная экспозиция. Изд. 2-е. Берлин, 1994. 287 с. (на нем. языке).

աշխատանքներ գրված են հակախորհրդային դիրքերից, սակայն հետաքրքրություն են ներկայացնում իրենց հարուստ փաստագրական նյութերով:

ԽՍՀՄ փլուզման և անդրկովկասյան նախկին խորհրդային հանրապետությունների անկախության ձեռք բերման հետ, ռուսաստանյան պատմագրության մեջ սկսեցին հայտնվել հոդվածներ, բրոշյուրներ և մենագրություններ, նվիրված կոլաբորացիոնիզմին ընդհանուր առմամբ, և կովկասյանին՝ մասնավորապես: Այս շրջանի աշխատանքների մեջ պետք է հատուկ նշել հայտնի ռուս ռազմական պատմաբան Ս.Ի.Սեմիրյազայի "Կոլաբորացիոնիզմ: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նրա բնույթը, տեսակը և դրսևորումները" ֆունդամենտալ մենագրությունը, որտեղ բացահայտվում են կոլաբորացիոնիզմի աղբյուրները, ձևերը և մեթոդները, նրա առանձնահատկությունները և եվրոպայի տարբեր երկրներում, այդ թվում Չյուսիսային Կովկասի օկուպացված տարածքներում, գերմանա-ֆաշիստական օկուպացիոն ռեժիմի կայացման ու գուրծումնեության վրա ունեցած ազդեցությունը:

Վերջին տաս տարվա ընթացքում լույս տեսած աշխատանքներից, որոնք նվիրված են Հայրենական Մեծ պատերազմի տարիներին ԽՍՀՄ օկուպացված տարածքներում կոլաբորացիոնիզմի դրսևորման տարբեր հարցերին, կարելի է առանձնացնել Ս.Ի.Գրոբյազկոյի, Ն.Տ.Նապասիյի և Ա.Վ.Օկորոկով² առենախոսական հետազոտությունները, որտեղ անմիջականորեն ուսումնասիրվում են վերմախտի կազմում հակախորհրդային զինվորական կազմավորումների ստեղծմանը և գործածմանը վերաբերող հարցեր, ինչպես նաև Յու.Ն.Իսաևի³ աստենախոսությունը, որը նվիրված է դիտարկվող ժամանակաշրջանում ռուսական էմիգրացիայի գործունեության ուսումնասիրությանը: Այս աշխատություններին միացել է Վ.Պ.Սիդորենկոյի⁴ առենախոսական հետազոտությունը, որի մեջ մեծ ուշադրություն է հատկացված 1941-1945 թվականներին Կովկասում կոլաբորացիոնիզմի դրսևորումներին:

1990-ականների վերջին 2000-ականների սկզբին ԽՍՀՄ ժողովուրդների մեջ կոլաբորացիոնիզմի հարցերի հետազոտությանը ակտիվ միացան նախկին ԽՍՀՄ հանրապետությունների այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Ս.Ի.Գրոբյազկոն, Ի.Գ.Երմոլովը, Ա.Կարասչուկը, Բ.Ն.Կովալը, Յու.Մադերը,

J. Forgotten legions: 1941-1945. New York, 1998; Munoz A. J. Hitler's Eastern Legions. V. 1. The Osttruppen. New York, 1997; Munoz A. J. Hitler's Eastern Legions. V. 2. The Osttruppen. New York, 1998; Nafziger G. F. Foreigners in Field Gray: The Russian, Croatian, and Italian Soldiers in the Wehrmacht. Piskah, Ohio: Privately Published, 1995; Двинов Б. Власовское движение в свете документов. Нью-Йорк, 1950. 121 с.; Андреева Е. Генерал Власов и русское освободительное движение / Пер. с англ. London: Overseas publ. interchange, 1990. 370 с.

¹ Семиряга М.И. Коллаборационизм: природа, типология и проявления в годы Второй мировой войны. М.: РОССПЭН, 2000. 863 с.

² Дробязко С.И. Восточные формирования в составе Вермахта (1941-1945 гг.): Автореф. дисс. ... канд. ист. наук. М., 1996. 26 с.; Напсо Н.Т. Восточные легионы в вермахте в годы Великой Отечественной войны 1941-1945: Автореф. дисс. ... канд. ист. наук. Майкоп, 1996. 27 с.; О कोरोков А.В. Антисоветские воинские формирования в годы второй мировой войны: Автореф. дисс. ... докт. ист. наук. М., 2001. с.38

³ Исаев Ю.Н. Участие российской эмиграции во Второй мировой войне: Автореф. дисс. ... канд. ист. наук. Брянск, 1999. с. 17

⁴ Сидоренко В.П. Войска НКВД на Кавказе в 1941-1945 гг.: исторический аспект: Автореф. дисс. ... канд. ист. наук. СПб., 2000. 43 с.

Ա.Վ.Օկորոկովը, Գ.Պրոխորովը, Օ.Վ.Ռոմանկոն, Գ.Տերեսչենկոն, Վ.Ե.Չերնովը, Ա.Գ.Շլյախտունովը, Վ.Չերնյավսկին, Ս.Գ.Չուկը և շատ ուրիշներ: ¹ Անմիջապես վերմախտի կովկասյան կազմավորումների ստեղծման և գործածման հարցերին է նվիրված Ս.Գ.Չուկի "Գերմանիայի կովկասյան քարտեզը" բովանդակալից աշխատությունը:²

Սակայն այդ բոլոր աշխատությունները, բացառությամբ Ա.Գ.Չուկի հիշատակված աշխատանքի, հայցորդի ընտրած թեմայի հետ ունեն անուղղակի կապ: Նրանց մեջ բացակայում է վերմախտի կազմում կովկասյան ազգային ստորաբաժանումների կազմավորմանը, պատրաստմանը և գործածմանը վերաբերվող հարցերի հետազոտությունը, իսկ կովկասյան ժողովուրդների ներկայացուցիչների կոլաբորացիոնիզմի դրսևորման առանձին խնդիրները քննարկվում են ավելի լայն հարցերի համատեքստում: Նշված հարցերին համալիր վերլուծություն տալու փորձեր ձեռնարկվել են մի քանի հեղինակների աշխատանքներում, բայց ազգայնական դիրքերից և միայն հայ կամ վրաց կազմավորումների վերաբերյալ:³

Այսպիսով, ներկա դրությամբ ժամանակակից հայրենական և արտասահմանյան պատմագրության մեջ բացակայում է վերմախտի կազմում կովկասյան կազմավորումների ստեղծման և գործածման հարցի համալիր վերլուծությունը, որը հիմնված լինելու քննարկվող իրադարձություններին մասնակից կողմերի արխիվային նյութերի վրա: Այդ բացը գալիս է լրացնելու ներկա աշխատությունը:

12. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, վերջաբանից և հավելվածներից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորվում է թեմայի կարևորությունը, վերլուծության է ենթարկվում աղբյուրագիտական հիմքը, բացահայտվում է նրա գիտական մշակվածության աստիճանը, ցուցադրվում է թեմայի որպես

¹ Дробязко С.И., Ермолов И.Г., Добровольческий полк "Десна" и другие военные формирования из советских граждан на территории Орловской области. М., 2001. 25 с.; Дробязко С., Карашук А. Вторая мировая война 1939-1945. Восточные легионы и казачьи части в Вермахте. М.: АСТ: Астрель, 2001. 46 с.; Дробязко С.И. Под знаменами врага. Антисоветские формирования в составе германских вооруженных сил 1941-1945 гг. М.: Изд-во Эксмо, 2005. 608 с.; Ковалев Б.Н. Нацистская оккупация и коллаборационизм в России, 1941-1945. М.: ООО "Издательство АСТ": ООО "Транзиткнига", 2004. 483 с.; О कोरोков А.В. Антисоветские воинские формирования в годы Второй мировой войны. М.: Изд-во Военного университета, 2000. 174 с.; Романько О. В. Мусульманские легионы во Второй мировой войне. М., 2004; Соцков Л. Неизвестный сепаратизм. М., 2003; Чернявский В., Мадер Ю., Чуев С., Прохоров Д. Диверсанты Третьего рейха. М., 2003; Чернов В.Е., Шляхтунов А.Г. Прибалтийские WAFFEN-SS. Герои или палачи... ? М.: Лит-Интер, 2004. 184 с.; Чуев С. Г. Спецслужбы Третьего рейха. Т. 1. СПб., 2003; Чуев С. Г. Проклятые солдаты. М., 2004; Шунков В. Солдаты разрушения. М., 2001. Терещенко Д. Германский солдат, Восточный фронт 1941 – 1943 гг. Киров, 2000.

² Чуев С.Г. Кавказская карта Германии // Военно-исторический архив. 2004. № 1. С. 35-67

³ Грузины под германским знаменем во Второй мировой войне. Тбилиси, 1994. (На груз. яз.); Мамулия Г. Грузинский легион в боях за свободу и независимость Грузии в годы Второй мировой войны. Тбилиси, 2003. (На груз. яз.)

ինքնուրույն ուսումնասիրության, ընտրության անհրաժեշտությունը, սահմանվում են հետազոտության առարկան, նպատակը և խնդիրները:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ “Կովկասյան կազմավորումների ստեղծումը վերնախտի կազմում”, նվիրված է Կովկասի ժողովուրդների ներկայացուցիչներից զինված կազմավորումների ստեղծման առանձնահատկությունների, գերմանական հրամանատարության շահերից ելնելով դրանց գործածման նախապատրաստման ուսումնասիրմանը: Գլուխը կազմված է չորս բաժիններից: Առաջին բաժնում ուսումնասիրվում են կլաբորացիոնիզմի դրսևորման նախադրյալները ու պայմանները քաղաքական էմիգրացիայի և ԽՍՀՄ կովկասյան հանրապետությունների քաղաքացիների մասի շրջանակում: Երկրորդ բաժինը նվիրված է գերմանական ղեկավարության և հատուկ մարմինների գործունեության հիմնական ուղղություններին, որոնք ստեղծված էին Գերմանիայում ինչպես սոցիալ-քաղաքական և էթնիկական-եկեղեցական իրավիճակի բազմալոզմանի ուսումնասիրման, այնպես էլ Խորհրդային Միության այդ տարածաշրջանում “հինգերորդ շարասյան” ձևավորման խնդրի պրակտիկ իրագործման համար: Այստեղ վերլուծվում է նաև գերմանական ղեկավարության մոտեցումների փոփոխությունը ազգային միավորումների ստեղծման և կիրառման հարցերի վերաբերյալ:

Երրորդ բաժնում դիտարկվում են կովկասյան լեզոնների կազմավորումը, քանակը և խնդիրները: Առանձին ազգային կովկասյան լեզոնների - ադրբեջանական, հայկական, վրացական և հյուսիսկովկասյան, - ինչպես նաև “Բերգմանն” բազմազգ գումարտակի (ընթացքում վերակազմավորվելով զնդի) ստեղծման և պատրաստման առանձնահատկությունները լուսաբանվել են առաջին գլխի չորրորդ բաժնում: Այստեղ նաև որոշակի ուշադրության են արժանացել ճշված միավորումների անձնակազմի գաղափարական ազդեցության հարցերը:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽՄ “Կովկասյան միավորումների օգտագործումը գերմանական ղեկավարության կողմից”, դիտարկվում են Կովկասի ժողովուրդներից ստեղծված միավորումների, մասերի և ստորաբաժանումների գործածման բնույթն ու առանձնահատկությունները: Գլուխը կազմված է երեք բաժնից: Առաջին բաժինը նվիրված է կովկասյան ազգային լեզոնների կիրառմանը արևելյան ռազմածակատի ռազմական գործողություններում, պարտիզանների դեմ պայքարում և օկուպացված տարածքներում պահպանական ծառայությանը, ինչպես նաև դրանց գործածմանը գերմանական հրամանատարության կողմից Բալկաններում և Արևմտյան Եվրոպայում: Երկրորդ բաժնում վերլուծվում է “Բերգմանն” (“Լեռնական”) բազմազգ գումարտակի (ընթացքում՝ զնդի) ռազմական կիրառման բնույթը, հաշվի առնելով նրա՝ որպես հատուկ միավորման նշանակությունը, որն արվերի ծրագրի համաձայն, նախատեսված էր օգտագործել քայքայիչ աշխատանքներ վարելու համար Կարմիր Բանակի ազգային միավորումների և Զյուսիսային Կովկասի և Անդրկովկասի բնակչության դեմ: Երրորդ բաժնում լուսաբանվում է Զայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանում կովկասյան կոլաբորացիոնիստների հետախուզական-դիվերսիոն և քայքայիչ գործունեությունը Կարմիր Բանակի թիկունքում և ԽՍՀՄ Անդրկովկասյան հանրապետություններում:

ՎԵՐՋԱՐԱՆՈՒՄ անփոփոխ էն հետազոտության արդյունքները, արված են ընդհանուր հետևություններ, տրված են գիտա-պրակտիկ խորհուրդներ և առաջարկություններ:

